

ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀՈԴՎԱԾ 4

ԸՆՏՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրելու իրավունքը քաղաքացուն տրված հնարավորություն է իր կողմից ընտրված մարմինների միջոցով մասնակցելու պետության կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը:

- Հայաստանում ընտրելու իրավունք ունեն.
- 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները,
- համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

ԸՆՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ընտրվելու իրավունքը քաղաքացուն տրված հնարավորություն է անմիջականորեն մասնակցելու պետության կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը:

ՀՀ-ում ընտրությունների միջոցով են ձևավորում Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները (համայնքի ղեկավար և ավագանի): Ընտրությունների միջոցով է ընտրվում ՀՀ նախագահը:

ՀՀ Նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող ՀՀ այն քաղաքացին,

- ում երեսունհինգ տարին լրացել է,
 - ով վերջին տասը տարում հանդիսանում է ՀՀ քաղաքացի,
 - ով վերջին տասը տարում մշտապես բնակվում է Հայաստանում:
- Նախագահն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հայաստանի նախագահի պաշտոնում:

ՀՀ Ազգային ժողովում ընտրվելու իրավունք ունեն ընտրական իրավունք ունեցող ՀՀ այն քաղաքացիները,

- ում 25 տարին լրացել է,

- ովքեր վերջին 5 տարում հանդիսանում են ՀՀ քաղաքացի,
- ովքեր վերջին 5 տարում մշտապես բնակվում են ՀՀ-ում:

Համայնքի ղեկավար կարող է ընտրվել յուրաքանչյուր ոք,

- ում 25 տարին լրացել է,
- ով տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունի,
- ով տվյալ համայնքում առնվազն մեկ տարի փաստացի բնակվում է:

Ավագանու անդամ կարող է ընտրվել յուրաքանչյուր ոք,

- ում 21 տարին լրացել է,
- ով տվյալ համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունի,
- ով տվյալ համայնքում առնվազն մեկ տարի փաստացի բնակվում է:

Երևան քաղաքի թաղային համայնքի ղեկավար կարող է ընտրվել ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի

- ում 25 տարին լրացել է,
- Երևան քաղաքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունի,

Երևան քաղաքի թաղային համայնքի ավագանու անդամ կարող է ընտրվել ՀՀ ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի ,

- ում 21 տարին լրացել է,
- Երևան քաղաքում առնվազն վերջին երկու տարվա հաշվառում ունի:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածու **չեն կարող առաջադրվել** սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ներքին գործերի, ազգային անվտանգության, պաշտպանության մարմինների և դատախազության աշխատակիցները:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ընդհանուր ընտրական իրավունքը երաշխավորում է քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքը՝ անկախ նրանց ազգությունից, ռասայից, սե-

ռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Արգելվում է վերոնշյալ հիմքերով ընտրական իրավունքի ցանկացած սահմանափակում:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները:

Ընտրելու իրավունք ունեցող ՀՀ կալանավորված քաղաքացիները իրավունք ունեն մասնակցել ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին և/կամ հանրաքվեին:

Նրանք ընտրություններին մասնակցում են կալանավորվածներին պահելու վայրերում կազմավորված ընտրական տեղամասերում:

ՀԱՎԱՍԱՐ ԸՆՏՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բոլոր ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, ընդ որում, յուրաքանչյուր ընտրող ունի մեկ ձայնի իրավունք:

Յուրաքանչյուր քաղաքացի կարող է ընդգրկվել միայն մեկ ընտրական ցուցակում, որով էլ ապահովվում է նրա՝ մեկ ձայն ունենալու իրավունքը:

Ոչ մի ընտրող որևէ այլ ընտրողի նկատմամբ չունի առավելություն: Բոլորը ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:

ՈՒՂՂԱԿԻ ԸՆՏՐՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բոլոր ընտրողի մարմինները ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների քվեարկության արդյունքում: Լիազորված կամ միջնորդավորված քվեարկությունն **ԱՐԳԵԼՎՈՒՄ Է:** Քաղաքացիները պետության կառավարմանը մասնակցում են իրենց կամքի ազատ արտահայտմամբ, անմիջականորեն ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով:

ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիներն ընտրություններին մասնակցում են **ԿԱՄԱՎՈՐ** հիմունքներով, այսինքն՝ ոչ ոք իրավունք չունի քաղաքացուն ստիպելու մասնակցել կամ չմասնակցել ընտրություններին:

Քաղաքացին իր ազատ կամաարտահայտությամբ է որոշում ընտրություններին մասնակցելու հարցը:

ԳԱՂՏՆԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրություններում քվեարկությունը **ԳԱՂՏՆԻ Է**: Ընտրողը ոչ միայն իրավունք ունի, այլ նաև պարտավոր է քվեարկել գաղտնի:

ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ընտրողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ որևէ վերահսկողությունը:

Քվեարկության գաղտնիության խախտումը առաջ է բերում **ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ**:

Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը՝ **պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ ԱԶՏԱՍԶՐԿՄԱՄԲ՝ վեց ամսից երկու տարի ժամկետով:**

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրությունների նախապատրաստման և անցկացման ողջ գործընթացում պետք է ապահովվի հրապարակայնությունը:

Ընտրությունների նախապատրաստմանն ու անցկացմանը վերաբերող որոշումները պաշտոնական մամուլում հրապարակվում են ընդունվելուց հետո՝ 3 օրվա ընթացքում:

Ընտրական հանձնաժողովների նիստերի և քվեարկության ընթացքում ապահովվում է վստահված անձանց, դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությունն ընտրական հանձնաժողովների աշխատանքներին, նրանց համար ապահովվում է աշխատանքային անհրաժեշտ և հավասար պայմաններ:

Ընտրությունների վերաբերյալ ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) որոշումների մասին տեղեկատվություն կարելի է ստանալ ԿԸՀ-ի պաշտոնական վեբ կայքում՝ www.elections.am:

ԿԸՀ-ի հասցեն է՝ Գևորգ Քոչարի փողոց, 21ա, հեռ.՝ (374 10) 543523, էլ. փոստ՝ cec@intergalaxy.am:

Լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև ընտրությունների հարցերով անվճար իրավաբանական օգնություն ստանալու համար, (նաև 2007թ.-ի մայիսի 12-ին), կարող եք դիմել **Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային** հետևյալ հասցեներով՝

- ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ (374 10) 540199, ֆաքս՝ (374 10) 580299, էլ. փոստ՝ ayla@ayla.am,
 - ք. Գյումրի, Տիգրան Մեծի պողոտա 1, բն. 2, հեռ.՝ (374 312) 23812, ֆաքս՝ (374 312) 38236 էլ. փոստ՝ gyumri@ayla.am,
 - ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72, հեռ./ֆաքս՝ (374 285) 62511, էլ. փոստ՝ kapan@ayla.am,
 - ք. Վանաձոր, Վարդանանց 82, բն. 1, հեռ./ֆաքս՝ (374 322) 22317, էլ. փոստ՝ vanadzor@ayla.am,
 - ք. Իջևան, Սահմանադրության հրապարակ 1, Մարզպետարանի շենք, հեռ./ֆաքս՝ (374 263) 32499, էլ. փոստ՝ ijevan@ayla.am,
 - ք. Գավառ, Մարզպետարանի շենք, հեռ./ֆաքս՝ (374 264) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am,
 - ք. Գորիս, Մաշտոցի 3, հեռ./ֆաքս՝ (374 284) 25861, էլ. փոստ՝ goris@ayla.am:
- Կարող եք այցելել նաև ՀԵԻԱ վեբ կայք՝ www.ayla.am:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Վրաստանում և Հայաստանում Նիդեռլանդների Թագավորության դեսպանատան Սատրա ԿԱՊ փոքր դրամաշնորհների ծրագրի կողմից տրամադրված միջոցների հաշվին, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից իրականացվող «Ընտրական իրավունքների իրազեկության և պաշտպանության քարտզարչավ» ծրագրի շրջանակներում:



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2007Թ.

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն տեղեկատվական թերթիկը տեղեկություններ է պարունակում Հայաստանում գործող ընտրական համակարգի, ՀՀ Նախագահի, Ազգային ժողովի, ՏԻՄ-երի ընտրությունների անցկացման ընդհանուր պայմանների և այս գործընթացում քաղաքացիների իրավունքների վերաբերյալ:

ԺՈՂՈՎԻ ԿՆՏԱՐՏՈՒՄ ԵՐԵՎԱՆԻ ԿՆՏԱՐՏՈՒՄ

